«Մխիթար Սեբաստացի» Կրթահամալիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մշակութային տարբերություններն էմոցիոնալ դրսևորումներում

Սովորող՝ Կարինե Գոմցյան

Դասարան՝ 12-1

Ղեկավար՝ Աշոտ Տիգրանյան

Երևան 2024

Բովանդակություն

Ներածություն ..... - 3 -

Գլուխ 1. Սահմանումներ ..... - 4 -

Գլուխ 2. Անհատապաշտ և կոլեկտիվ մշակույթներ ..... - 6 -

Գլուխ 3. Զգացմունքների երկչափ կառուցվածք. Վալենտականություն և գրգռվածություն ..... - 8 -

Գլուխ 4. Մշակութային տարբերություններն էմոցիոնալ գրգռվածության աստիճաններում ..... - 10 -

Եզրակացություն ..... - 14 -

Օգտագործված գրականության ցանկ ..... - 15 -

Ներածություն

«Մշակույթը կարող է զգայուն թեմա լինել: Մարդու մշակույթի մասին խոսակցությունը հաճախ հրահրում է այնպիսի ռեակցիա, ինչպես նրա մոր մասին խոսելը[1]» ասում է Էրին Մեյերը իր «Աշխարհի մշակույթների քարտեզը» գրքում: Մշակույթն ու մարդկային զգացմունքները ակնհայտորեն փողկապակցված են: Մշակույթը, որպես մարդու ապրելակերպի հիմք, թելադրում է նաև մարդկային բոլոր ապրումներն ու հույզերը: Այս հետազոտական աշխատանքը ուղղված է մշակույթի և էմոցիաների փոխկապակցման բացահայտմանը:

Հոգեբանների ուսումնասիրությունների համար հաճախ կրկնվող խնդիր են թե՛ համընդհանուր, թե՛ հասարակական էմոցիաները: Որոշ հետազոտողներ դիտարկում են էմոցիաները որպես համընդհանուր կառույց և որ զգացմունքների ցուցադրման մեծ մասը հիմնված է միմիայն կենսաբանության վրա: Էմոցիաների կենսաբանական ծագման մասին արվել և արվում են հազարավոր հետազոտություններ: Էկմանը[2] պնդում էր, որ զգացմունքները հիմնորեն որոշվում են գենետիկայի միջոցով, հետևաբար, մեր առանձին դիմային արտահայտությունները նույնկերպ են ընկալվում մշակույթների և ազգերի մեծ մասում: Շատ տարբեր մշակույթներում մարդիկ ապրում են նույնատիպ հույզեր նմանատիպ իրավիճակներում: Մատսամոտոյի և իր կոլեգաների[3] կողմից իրականացված հետազոտության մեջ ճապոնացի և ամերիկացի մասնակիցները գրանցեցին իրենց ուրախության, տխրության և զայրույթի զգացմունքները նույն իրավիճակերում: Այլ կերպ ասած, մարդիկ վերապրում էին դրական էմոցիաներ, երբ գտնվում էին նախորդող դրական իրավիճակերում (օրինակ՝ հանդիպում ընկերների հետ կամ հաջողությունների գրանցում) և բացասական էմոցիաներ՝ նախորդող բացասական իրավիճակերում (օրինակ՝ ավտոմեքենաների խցանում կամ անարդարություն) անկախ իրենց մշակույթից:

Մշակույթը, հանդիսանալով մարդկային կյանքի անբաժան մաս, նույնպես ունի իր ազդեցությունը մարդու վրա: Հետևում է, որ մշակույթը պետք է ունենա իր ազդեցության շրջանակը նաև էմոցիաների վրա և հակառակը: Մշակույթը սահմանում է, թե ինչպես են էմոցիաները զգացվում և արտահայտվում տրված մշակութային համատեքստում: Այն ձևավորում է մարդկանց կոնկրետ իրավիճակներում զգալու գործընթացը և դրանք արտահայտելու ձևերը: Մեծաթիվ ուսումնասիրություններում էմոցիաների տարբեր ասպետկներ մշակութային տեսակետից տարբերվել են, որովհետև էմոցիաները կախված են նաև մեր շրջակա միջավայրից, հասարակական կամ մշակութային իրավիճակից:

---

[1] Էրին Մեյեր. «Աշխարհի մշակույթների քարտեզը», Երևան 2023, Նախաբան, էջեր 30-31

[2] Ekman P. Universals and cultural differences in facial expressions of emotion. In: Cole JK, editor. Nebraska symposium on motivation. Lincoln, NE: University of Nebraska Press; 1972.

[3] Matsumoto D, Kudoh T, Scherer K, Wallbott H. Antecedents of and reactions to emotions in the United States and Japan. J Cross Cult Psychol 1988

Հարկ է նշել, որ հետազոտական աշխատանքը իր շեշտը դնում է էմոցիոնալ դրսևորման դոմինանտ ուղղություններից մեկի՝ գրգռվածության աստիճանների վրա և խորանում նրա ուսումնասիրման մեջ:

Գլուխ 1. Սահմանումներ

Մշակույթը հասարակության և մարդու պատմական զարգացման որոշակի մակարդակ է, որն արտահայտվում է մարդկանց գործունեության և կյանքի կազմակերպման ձևերով ու տիպերով: Հասկացությունն օգտագործվում է որոշակի պատմական դարաշրջանների, հասարակական-տնտեսական ֆորմացիաների, կոնկրետ հասարակարգերի, ազգությունների, ազգերի, ինչպես նաև կյանքի ու գործունեության առանձնահատուկ եղանակների զարգացման մակարդակը բնութագրելու համար: Մշակույթը կենտրոնական հայեցակարգ է մարդաբանության մեջ և ներառում է այն բոլոր երևույթները, որ սոցիալական ուսուցման միջոցով փոխանցվում են մարդկային հասարակություններում:

Մշակույթն ընդգրկում է ոչ միայն մարդկանց գործունեության առարկայական արդյունքները (մեքենաներ, տեխնիկական կառույցներ, արվեստի ստեղծագործություններ, իրավունքի և բարոյականության նորմեր և այլն), այլև սուբյեկտիվ մարդկային ուժերն ու ընդունակությունները, որոնք իրականացվում են գործունեության մեջ (գիտելիքներ, ունակություններ, արտադրական և մասնագիտական հմտություններ, աշխարհայացք և այլն): Մշակույթը, արտադրության հոգևոր և նյութական տեսակներին համապատասխան, բաժանվում է հոգևոր մշակույթի և նյութական մշակույթի[4]:

Միջին դարերում մշակույթ հասկացությունը օգտագործվում էր մշակաբույսերի աճեցման հարցում տեխնոլոգիական զարգացվածությունը բնորոշելու համար: Այդտեղից էլ առաջացել է գյուղատնտեսություն «agriculture» բառը: Մշակույթ հասակացությունը 18-րդ դարից սկսեցին կիրառել նաև մարդկանց բնութագրելիս: Այն մարդկանց, ովքեր առանձնանում էին իրենց բարեկիրթ պահվածքով և կրթվածությամբ, սկսեցին անվանել «կուլտուրական» կամ քաղաքակիրթ: Այդպես էին բնորոշում հիմնականում արիստոկրատներին, որպեսզի նրանց տարանջատեն սովորական, ըստ իրենց՝ մյուս «անկուլտուրական» մարդկանցից, ովքեր սովորական շարքային քաղաքացիներ էին: Գերմաներեն «Kultur» բառը ևս բնութագրում է հասարակության քաղաքակրթվածության աստիճանը: Մշակույթ հասկացությունը սերտորեն կապվում էր տարբեր հասարակություններում քաղաքակրթության զարգացման մակարդակի հետ, սակայն դրանք ամենևին էլ պետք չէ նույնացնել: Մշակույթ հասկացության ժամանակակից գիտական սահմանումը զերծ է մարդկանց բաժանման արիստոկրատական կամ քաղաքակրթության զարգացման մակարդակի բնորոշումներից: Այսպես, մշակույթը սահմանվում է որպես համոզմունքների, արժեքների և արտահայտչամիջոցների ամբողջություն, որոնք ընդհանուր են որոշակի խմբի համար, ծառայում են նրանց սոցիալական փորձի կուտակմանը, ինչպես նաև վերահսկում ու կանոնակարգում են

[4] Հայկական սովետական հանրագիտարան, խմբագիր՝ Վիկտոր Համբարձումյան, Երևան, Հայ սովետական հանրագիտարան հրատարակչություն, 1981, էջ 656:

տվյալ խմբի անդամների վարքագիծը: Մշակույթի յուրացումը հասարակության կամ խմբի ներսում տեղի է ունենում ուսուցման միջոցով[5]:

Ամենաընդհանրական կերպով մշակույթ է այն ամենը, ինչ ստեղծվել է մարդու կողմից պատմության զարգացման ընթացքում: Ըստ Օ. Յակուբի, մշակույթ հասկացությունը մատնանշում է հասարակության որակական բնութագրիչները, էությունն ու առանձնահատկությունները, դրա զարգացման ընթացքն ու ձեռքբերումները: Ամերիկյան սոցիոլոգիական մտքի կարկառուն ներկայացուցիչներից Ն. Սմելզերը մշակույթը սահմանում է որպես արժեքների, աշխարհի մասին պատկերացումների և վարքային մոդելների համակարգ, որն ընդհանուր է որոշակի կենսաձև ունեցող մարդկանց խմբի համար:

Ընդհանրացնելով մշակույթի սահմանման տարբեր ուղղությունները, նշենք, որ սոցիոլոգիայում մշակույթը համարվում է զարգացող բարդ կառուցվածքային ամբողջություն, որն ունի սոցիալական բնույթ, դրսևորվում է սոցիալական փոխհարաբերություններում և ուղղված է հասարակության մեջ նյութական և ոչ նյութական՝ հոգևոր, երևույթների ու արժեքների ստեղծմանը, տարածմանն ու պահպանմանը:

[5] Смелзер Н. Социология: пер. с англ. — М.: Феникс, 1994

Գլուխ 2. Անհատապաշտ և կոլեկտիվ մշակույթներ

Միջմշակութային հոգեբանության մեջ մշակույթը սահմանվում է որպես «ընդհանուր տարր, որն ապահովում է նույն լեզվի, պատմական ժամանակաշրջանի և աշխարհագրական դիրք ունեցողների միջև ընկալման, հավատալու, գնահատելու, հաղորդակցվելու և գործելու չափանիշները»: Մարկուսի և Կիտայամայի[6] մոնումենտալ հետազոտության՝ արևմուտքի (օրինակ՝ Ամերիկա) և արևելքի (օրինակ՝ Ճապոնիա) ինքնության համեմատության հրատարակումից հետո, միջմշակութային ուսումնասիրությունները սկսեցին համեմատել արևմտյան մշակույթը արևելյանի հետ: Արևելյան մշակույթը հիմականում ներառում է իր մեջ Արևելյան Ասիայի պետությունները, ինչպիսիք են Կորեան, Ճապոնիան և Չինաստանը: Արևմտյան մշակույթը իր մեջ ներառում է Հյուսիսային Ամերիկայի և Արևմտյան Եվրոպայի պետությունները:

Մարկուսն ու Կիտայաման ներկայացրել են «self-construal» տերմինը (Հայ.՝ ինքնակառավարում)՝ հիմնելով հստակ տարբերություններն երկու մշակույթների միջև: Արևմտյանները իրենց համարում են անկախ և առանձին բոլոր մարդկանցից: Այս ընկալումը կոչվում է անկախ ինքնակառավարում: Նրանք, ովքեր ունեն անկախ ինքնակառավարում, համարում են, որ հասարակության հիմնային տարրն անհատն է և խումբը գոյություն ունի անհատների բարեկեցությունը բավարարելու համար: Այս պատճառով արևմտյան մշակույթը սահմանվում է որպես անհատապաշտ մշակույթ: Անհատապաշտ մշակույթում անհատի յուրահատկությունը կարևոր է: Մարդկանց խրախուսվում է իրենց ներքին հոգեվիճակը և զգացմունքները արտահայտելը և ուրիշ մարդկանց վրա ազդեցություն թողնելը:

Ի տարբերություն Արևմտյանի, Արևելքի բնակիչները իրենք իրենց սկզբունքորեն կապում և փոխկապակցում են ուրիշների հետ: Սա կոչվում է փոխկապակցված ինքնակառավարում: Նրանց համար, ովքեր ունեն փոխկապակցված ինքնակառավարում, հասարակության հիմնային տարը խումբն է: Անհատները պետք է հարմալրվեն խմբին, որպեսզի հասարակության հարմոնիան շարունակի գործել: Այս պատճառով էլ, արևելյան մշակույթը սահմանվում է որպես կոլեկտիվ մշակույթ: Կոլեկտիվ մշակույթների միջավայրում անհատները փորձում են փոփոխել իրենց և չազդել ուրիշների վրա, որպեսզի կարողան համապատասխանել խմբերին: Չնայած ամեն ինչին և՛ անհատապաշտ, և՛ կոլեկտիվ մշակույթներում բոլոր անհատերը ունեն և՛ անկախ, և՛ փոխկապակցված ինքնակառավարում և ամեն մի մշակույթն էլ հիմականում խրախուսում է ավելի և ավելի ուժեղ մշակել իր ինքնակառավարման ձևը:

Էրին Մեյերը իր աշխատության մեջ հիշատակում է «ցածր և բարձր կոնտեքստ» տերմինները, որոնք նույնպես նկարագրում են մշակույթները: Ցածր կոնտեքստային է համարվում այն մշակույթը, որտեղ լավ շփումը հստակ և պարզ է: Ուղերձը փոխանցվում է և ընկալվում է բառացի: Ողջունելի է խոսքի կրկնությունը, եթե դա օգնում է իմաստը պարզաբանելու: Բարձր կոնտեքստային է համարվում այն մշակույթը, որտեղ լավ շփումը

[6] . Markus HR, Kitayama S. Culture and the self: implications for cognition, emotion, and motivation. Psychol Rev 1991

բարդ է ու լի բազմաշերտ նրբերանգներով: Ուղերձը փոխանցվում և ընկալվում է տողատակերով: Ուղերձի իմաստը հաճախ ենթադրվում է և հստակ չի արտահայտվում:

Գլուխ 3. Զգացմունքների երկչափ կառուցվածք. Վալենտականություն և գրգռվածություն

Մայերսը[7] պդում էր, որ «ֆիզիոլոգիական գրգռվածությունը, արտահայտիչ վարքագիծը և գիտակցված փորձը» էմոցիաների հիմնային բաղադրիչներն են: Այլ կերպ ասած, էմոցիոնալ գրգռվածությունն ամենակարևոր ուսումնասիրվող թեմաներից է հոգեբանական գրականության մեջ: Այս ամենի հետ մեկտեղ, հույզերի ամենաշատ ուսումնասիրված տարրը, որը ցույց է տալիս մշակութային տարբերությունը, էմոցիոնալ գրգռվածության աստիճանն է: Հուզային վիճակը (Օրինակ՝ էմոցիան, տրամադրությունը, զգացողությունը) բաղկացած է երկու հիմնային չափերից՝ վալենտականությունից և գրգռվածության աստիճանից: Ռուսսելը առաջարկել է հույզերի շրջանաձև մոդելը: Հույզերի շրջանաձև մոդելը ցույց է տալիս, որ բոլոր զգացմունքները երկու անկախ նեյրոֆիզիոլոգիական համակարգերի արդյունք են: Հուզայի վիճակը կազմված է համակարգված կերպով և ներկայացված է որպես երկբևեռ իրականություն՝ հաճույք-դժգոհություն (վալենտականություն) և գրգռվածության աստիճան: Գրգռվածության աստիճանի իրականությունը, որը նաև կոչվում է ակտիվացում-ապաակտիվացում, կամ ներգրավվածություն-անջատում, վերաբերում է ֆիզիոլոգիական ակտիվության աստիճանի ընկալմանը հուզային փորձի ընթացքում: Բարձր հուզային գրգռվածությունը կարող է ընկալվել որպես ինքնավար նիարդային համակարգի ակտիվացում: Գրականությունը ցույց է տալիս, որ և՛ վալենտականությունը, և՛ գրգռվածությունն ազդում են մեր ուղեղի ակտիվության և ճանաչողական վարքագծի վրա, ինչպիսիք են որոշում կայացնելու հմտությունը կամ հիշողությունը:

Ռուսսելը[8] բաժանել է հույզերի վերբալ արտահայտություններն անգլերեն լեզվով վալենտական և գրգռված իրականություններում: Այդ ժամանակից այս երկգործոն կառուցվածքը ներկայացված է բազմաթիվ ուսումնասիրությունների մեջ տարբեր ձևաչափերով: Հույզերի այս երկչափ կառուցվածքը ապացուցված է, որ գոյություն ունի տարբեր ազգերում և մշակույթներում: Սանդղակ 1-ը ներկայացնում է բարձր և ցածր գրգռվածության հույզերը ըստ վերոնշյալ գրականության:

Տարբեր գրգռվածության աստիճանի հույզերը ունեն տարբեր նպատակներ և գործոններ: Ռուսելը պնդում էր, որ բարձր գրգռվածության էմոցիաները լիցքավորված վիճակներ են, որոնք նախապատրաստում են գործողության: Այս էմոցիաները համապատասխանում են այն իրավիճակներին, որտեղ հարկավոր է մոբիլիզացիա և էներգիա: Բարձր գրգռվածության հույզերի առկայությունը օգնում է, որպեսզի որոշում կայացնելը դառնա ավելի կենտրոնացված և հեշտ: Հայտնի է, որ բարձր գրգռվածության հույզերը, ինչպիսիք են ուրախությունը կամ զայրույթը, ուժեղացնում են նյարդային

[7] Myers DG. Theories of emotion. In: Psychology. 7th ed. New York, NY: Worth Publishers; 2004.

[8] Russell JA. A circumplex model of affect. J Pers Soc Psychol 1980

համակարգը տարբեր ձևերով: Ի հակադրություն, ցածր գրգռվածության հույզերը սպառողական վիճակներ են, որոնք նախապատրաստում են անգործության և հանգստի:

Սանդղակ 1՝

Ուսումնասիրություններ	**Բարձր գրգռվածության հույզեր**	**Ցածր գրգռվածության հույզեր**
Ռուսսել (1980)	Վախեցած, տագնապած, զայրացած, գրգռված, ապշած, հիացած, հուզված, ոգևորված, հիասթափված, շնորհակալ, ուրախ, լարված	Հանգիստ, ձանձրացած, գոհ, ընկճված, մռայլ, թշվառ, բավարարված, տխուր, հանդարտ, քնկոտ, հոգնած
Ֆելդման (1993)[9]	Վախեցած, եռանդուն, նյարդային, աշխույժ	Հանգիստ, թուլացած, քնկոտ, սպառված
Ծայի (2007)[10]	Ուրախ, խանդավառ, ոգևորված, վախեցած, թշնամական տրամադրված, նյարդային	Հանգիստ, ձանձրացած, խաղաղ, թուլացած, քնկոտ, դանդաղկոտ
Սուհ և Կու (2011)[11]	Նյարդայնացած, երջանիկ	Անօգնական, խաղաղ

[9] Feldman LA. Distinguishing depression and anxiety in self-report: evidence from confirmatory factor analysis on nonclinical and clinical samples. J Consult Clin Psychol 1993

[10] Tsai JL. Ideal affect: cultural causes and behavioral consequences. Perspect Psychol Sci 2007

[11] Suh EM, Koo J. A concise measure of subjective well-being (COMOSWB): scale development and validation. Korean J Soc Pers Psychol 2011 [In Korean, English abstract].

Գլուխ 4. Մշակութային տարբերություններն էմոցիոնալ գրգռվածության աստիճաններում

Արևմտյան մշակույթը հակված է բարձր գրգռվածության հույզերի ի տարբերություն արևելյանի, որը հակված է ցածր գրգռվածության հույզերի: Այս մշակութային տարբերությունները բացատրվում են անհատապաշտ և կոլեկտիվ մշակույթների հստակ բնութագրերով: Արևմտյան մշակույթում, մարդիկ փորձում են միմյանց վրա ազդեցություն ունենալ: Այս նպատակի համար բարձր գրգռվածության հույզերն անփոխարինելի գործիք են դառնում: Արևելյան մշակույթը ավելի կողմնակից է դիմացինին հարմարվելու և միասնական հարմարավետության հասնելուն: Այս նպատակին հասնելու համար ցածր գրգռվածության հույզերը ավելի մեծ արդյունք են գրանցում:

Իդեալական էմոցիան կամ «Հուզային վիճակ, որը մարդիկ ցանկանում են զգալ» կարևոր է, քանի որ մարդիկ մոտիվացված են իրենց պահելու այս կամ այն ձևով, որպեսզի նրանք զգան իրենց ցանկալի էմոցիաները: Հետևաբար, մարդիկ հստակ մշակույթներում ձգտում են վերապրել այն հուզային վիճակը, որը համարում են իդեալական իրենց տարածաշրջանում: Ծային պնդում էր, որ արևմուտքը ավելի շատ է արժևորում բարձր գրգռվածության հույզերը, որպեսզի կարողանա խթանել բարձր հուզականություն առաջացնող գործունեությունները: Ամերիկացիները, ի տարբերություն Արևելյան Ասիացիների, ավելի շատ են նախընտրում բարձր հուզական վիճակները, ինչպիսիք են ոգևորությունը կամ խանդավառությունը: Նույնիսկ արևմուտքի երեխաները իրենց պատմվածքներից սովորում են, որ բարձր հուզականության էմոցիաները անթերի են և խրախուսելի: Հակառակ պնդումը ճիշտ է նաև արևելքի համար:

Ուրախության գաղափարը նույնպես տարբերվում է ըստ մշակույթի գրգռվածության աստիճանի: Լուն և Գիլմուրը[12] իրագործել են միջմշակութային ուսումնասիրություն ուրախության գաղափարի վերաբերյալ, որից պարզվել է, որ «Ամերիկյան» ուրախության գաղափարը շեշտադրված է լավատես լինելու վրա, քանի դեռ Չինաստանում ուրախության գաղափարը կենտրոնացած է պաշտոնական և հավաքված լինելու վրա: Վերոնշյալը կրկնվել է նաև մեկ այլ ուսումնասիրության ընթացքում: Ուչիդան և Կիտայաման [13]ցույց են տվել, որ ճապոնացիներն երջանկությունն ավելի հաճախ ընկալում են որպես ցածր գրգռվածության դրական հույզերի ապրում:

Մշակույթներում հուզական գրգռվածության աստիճանների նորմերի տարբերության պատճառով առաջանում են էմոցիոնալ գրգռվածության աստիճանների իրական պատկերի տարբերություններ: Կացենը և Լին[14] իրականացրել են

---

[12] Lu L, Gilmour R. Culture and conceptions of happiness: individual oriented and social oriented SWB. J Happiness Stud 2004

[13] Uchida Y, Kitayama S. Happiness and unhappiness in East and West: themes and variations. Emotion 2009

[14] Kacen JJ, Lee JA. The influence of culture on consumer impulsive buying behavior. J Consumer Psychol 2002

միջմշակութային ուսումնասիրություններ, որտեղ համեմատել են Կովկասը և Ասիան: Հետազոտողներն օգտագործել են գրգռվածության սանդղակ՝ հուզական ածականներից ներկայացնող գրգռման տարբեր մակարդակներից բաղկացած չորս երկբևեռ տարրեր: Էմոցիոնալ տարրերն էին՝ հավասարակշռված-հանգիստ (հակադարձը), հանգիստ-ոգևորված, կատաղի-ծույլ (հակադարձը) և չգրգռվող–գրգռվող: Արդյունքները ցույց տվեցին, որ կովկասցիները ավելի հակված էին բարձր գրգռվածության էմոցիոնալ վիճակներին (Օրինակ՝ հավասարակշռված, ոգևորված, կատաղի և գրգռված), քանի դեռ ասիացիները նախընտրում էին ցածր գրգռվածության էմոցիոնալ վիճակները (Օրիակ՝ հանգիստ, թուլացած, ծույլ և չգրգռվող): Ի հավելում, Ծային և կոլեգաները հայտարարեցին, որ որքան մասնակիցն ավելի մոտ է ամերիկական մշակույթի կողմնորոշմանը, այնքան ավելի բարձր է նրա սրտանոթային գրգռման մակարդակը միջանձնային առաջադրանքների ընթացքում:

Անհատապաշտ և կոլեկտիվ մշակույթների էմոցիոնալ սանդղակի հետազոտության մեջ կարող ենք գտնել իրական էմոցիոնալ գրգռվածության մակարդակի մեկ այլ տարբերություն: Ամերիկայում զարգացած հուզային սանդղակը, որը չափում է դրական և բացասական էմոցիոնալ փորձերը, բաղկացած է հիմնականում բարձր գրգռվածության հույզերից: Սանդղակի այս կազմությունը պայմանավորված է նրանով, որ այն հիմնված է տարբեր մշակույթներից եկող մարդկանց հուզային փորձի վրա: Սա պնդում է, որ ամերիկացիները վերապրում են բարձր գրգռվածության էմոցիաներ շատ ավելի հաճախ քան ցածր: Օրինակ՝ ամենատարածված էմոցիոնալ սանդղակներից մեկը՝ Դրական և Բացասական Հույզերի Սանդղակը, ստեղծել է ամերիկացի հետազոտողը: Վերոնշյալ սանդղակի էմոցիոնալ տարրերում գերակշռում են բարձր գրգռվածության էմոցիաները, ինչպիսիք են ոգևորությունը, խանդավառությունը և ակտիվությունը:

Միջմշակութային շփման մեջ շփման կոնտեքստի մակարդակը կարող է նույնպես հանդիսանալ էմոցիոնալ գրգռվածության աղբյուր: Միացյալ Նահանգները աշխարհի ամենացածր կոնտեքստային երկիրն է, իսկ անգլո-սաքսոնական բոլոր մշակույթները ավելի հակված են ցածր կոնտեքստի: Ընդ որում, Մեծ Բրիտանիան ամենաբարձր կոնտեքստային մշակույթ ունեցող երկիրն է անգլո-սաքսոնական խմբում: Աֆրիկյան ու ասիական բազմաթիվ երկրներ բարձր կոնտեքստային են: Ճապոնական շփման մշակույթն աշխարհի ամենաբարձր կոնտեքստայինն է (Սանդղակ 2): Սանդղակ 2-րդից կարող ենք հետևել, որ ցածր կոնտեքստային պետություններն էմոցիոնալ գրգռվածության աստիճաններում բարձր գրգռվածության են: Ճիշտ է նաև հակառակը: Եթե ցածրկոնտեքստային մշակույթից եք, բարձրկոնտեքստային մշակույթի ներկայացուցիչները կարող են թվալ գաղտնապահ, ոչ թափանցիկ կամ անարդյունավետ շփվող: Մյուս կողմից, եթե դուք բարձրկոնտեքստային մշակույթից եք, ձեզ կարող է թվալ, որ ցածրկոնտեքստային մշակույթի ներկայացուցիչներն անտեղի կրկնում են ակնհայտը («Պետք չէր դա ասել, բոլորս հասկացանք») կամ նույնիսկ ներողամիտ ու հովանավորողի պես են իրենց դրսևորում («Այնպես եք խոսում, կարծես մենք երեխաներ ենք»):

Սանդղակ 2՝

Ցածր կոնտեքստ	Միջին կոնտեքստ	Բարձր կոնտեքստ
ԱՄՆ, Նիդերլանդներ, Ֆինլանդիա, Ավստրալիա, Գերմանիա, Կանադա, Մեծ Բրիտանիա	Իսպանիա, Իտալիա, Բրազիլիա, Մեքսիկա, Ֆրանսիա, Արգենտինա, Ռուսաստան, Պերու	Չինաստան, Ճապոնիա, Սինգապուր, Իրան, Կորեա, Քենիա, Ինդոնեզիիա, Արաբիա

Մշակութային տարբերությունները կան նաև էմոցիաների ֆիզիոլոգիական և վարքագծային ասպեկտներում: Շերերի կողմից իրականացված հետազոտությունը ցույց է տվել, որ ճապոնացիները, ի տարբերություն ամերիկացի և եվրոպացի մասնակիցների, ցուցաբերում էին շատ ավելի քիչ ֆիզիոլոգիական ախտանիշներ: Մեսքիտան և Ֆրիջան պնդում են, որ էմոցիաներում այսպիսի ֆիզիոլոգիական ռեակցիաների միակ հավանական բացատրությունը իրական տարբերությունն է: Մշակույթից մշակույթ տարբերվում են նաև էմոցիոնալ գրգռվածությանը համապատասխանող վարքագծերը: Արևմուտքի մարդիկ նախընտրում են մասնակցել ավելի ակտիվ սպորտաձևերում որպեսզի առաջացնեն բարձր գրգռվածության էմոցիաներ: Ծնողները խրախուսում են իրենց երեխաների ներգրավվել այն գործունեություններում, որոնք ավելի շատ են առաջացնում առաջնային և կրևոր մշակութային էմոցիաներ: Օրինակ՝ գրանցված է, որ արևմտյան մայրերը խրախուսում են իրենց երեխաներին խաղալ խաղեր, որոնք զարգացնում են իրենց էմոցիոնալ գրգռվածության աստիճանը: Հետևաբար, մշակութային տարբերություններն էմոցիոնալ գրգռվածության աստիճաններում առաջանում և կազմվում են համեմատաբար երիտասարդ տարիքում:

Էմոցիոնալ գրգռվածության աստիճանը մշակութային տարբերություններում ապացուցող ևս մեկ կարևոր հետազոտություն է իրականացվել: Շվարցն[15] ասում է, որ անհատապաշտ և անկախ ինքնակառավարումը շատ մոտ է «ձգտելու» արժեքին: Անհատները, ովքեր օժտված են ուժեղ «ձգտման» արժեքով մոտիվացված են ապրելու ոգևորիչ և զանազան կյանքով, ինչպես նաև փնտրում են նորություններ և մարտահրավերներ իրենց կյաքում: Նման նպատակներից բխող վարվելակերպն ավելի հակված է բարձր գրգռվածության էմոցիաների: Հետևաբար, Շվարցի ուսումասիրությունը ավելի հաճախակի վերապրում են արևմտյան մշակույթներում, քան արևելյան: Սա նաև ևս մեկ անգամ փաստում է այն գաղափարը, որ իմպուլսիվությունը և նորություններ փնտրող վարքագիծը, որոնք սերտ կապված են հուզային գրգռվածության հետ, խորապես արմատացած են ահատապաշտ պետություններում:

Այն փաստը, որ ասիական մշակույթի նորմերը չեն խրախուսում վերապրել կամ ցուցադրել բարձր գրգռվածության հույզեր, կարող է նաև բացատրվել ասիական մշակութային բժշկությամբ: Կորեական կամ չինական բժշկության մեջ ենթադրվում է, որ մարդիկ ունեն 7 հույզ, որոնց մեջ ներառվում են ուրախությունը, զայրույթը, տխրությունը,

[15] Schwartz SH. Universals in the content and structure of values: theoretical advances and empirical tests in 20 countries. Adv Exp Soc Psychol 1992

հաճույքը, սերը, ագահությունը և ատելությունը: Ըստ այս տեսակետի, չափազանց զգացմունքային լինելը կարող է վնասակար լինել և առաջացնել հիվանդություններ նույնիսկ դրական էմոցիաների դեպքում: Օրինակ՝ Hwabyung, որը հայտնի է նաև որպես «զայրույթի համախտանիշ», հիվանդություն է կորեական մշակույթում, որը առաջանում է զայրույթից՝ բարձր գրգռվածության հույզից:

Կցանկանանք նշել, որ որքան էլ մեծ ուսումնասիրությունների ընթացքում ընդունված է աշխարհը բաժանել արևմտյան և արևելյան մշակույթների, հարկ է շեշտել, որ և՛ արևմտյան, և՛ արևելյան մշակույթներն էլ իրենց միջև ունեն շատ տարբերություններ: Օրինակ՝ առաջնորդման հարցում միմյանց այդքան մոտ գտնվող Ճապոնիան և Չինաստանը, որոնք երկուսն էլ հիերարխիկ են, իրարից կտրականապես տարբերվում են որոշման հարցում. Ճապոնիան համարվում է կոսենսուսային, հետևաբար որոշումները կայացնում է խմբում՝ ընդհանուր համաձայնությամբ, իսկ Չինաստանը համարվում է «Վերից վար»՝ որոշումները կայացնում են անհատները (սովորաբար՝ ղեկավարությունը):

Եզրակացություն

Էմոցիոնալ գրգռվածությունը հիմնային և կարևոր տարածություն է հուզային դաշտում: Ուսումնասիրությունները շարունակաբար ապացուցում են մշակութային տարբերություններն էմոցիոնալ գրգռվածության աստիճաններում արևմուտքում և արևելքում: Արևմտյան արժեքները ավելի շատ խթանում են և վերապրում բարձր գրգռվածության էմոցիաներ քան ցածր գրգռվածության, քանի դեռ արևելքում հակառակն է: Ինչպես քննարկվեց էմոցիաներն ունեն կենսաբանական հիմք: Էմոցիոնալ երկու հիմնային տարածությունները՝ վալենտականությունը և գրգռվածությունը, հատկապես գրգռվածության աստիճաններում, կարող են նաև ունենալ հետևանքներ այլ կից ոլորտներում, ինչպիսիք են նյարդաբանությունը և բժշկությունը: Չնայած, որ մինչ այս պահը միայն քիչ հետազոտություններ են կատարվել Ասիայի բժշկության վերաբերյալ հուզական ասպետկներում: Ինչպես նշված էր հոգեբանական գրականության և ասիական բժշկության մեջ հույզերի մասին բացահայտումները համահունչ են, քանի որ կորեական բժշկությունը զգուշացնում է ավելորդ հուզական ակտիվացման վտանգների մասին, որը նույնն է ինչ բարձր հուզական գրգռվածությունը:

Հետազոտությունը կարողացավ հստակ ցույց տալ էմոցիոնալ ասպեկտի կարևորությունը աշխարհի մշակույթներում և հակառակը: Հետազոտությունը ապացուցեց հուզական գիտելիքներով օժտված լինելու կարևորությունը մեր կյանքում և գործունեության մեջ: Հաշվի առնելով մերօրյա միջմշակութային կապերի և շփման անսահման հնարավորությունները՝ մեր հետազոտական աշխատանքն օգնեց բացել շատ հարցերի պատասխաններ և ներկայացրեց հնարավոր տարբերությունները արևմտյան և արևելյան մշակույթների միջև:

Այս ամենին զուգահեռ, համեմատելով կատարված ուսումնասիրությունները մշակութային նորմերի մասին էմոցիոնալ գրգռվածության աստիճաններում, շատ ավելի քիչ հետազոտություններ են կատարվել ֆիզիոլոգիական չափումներով էմոցիոնալ գրգռման աստիճանների վերաբերյալ մշակութային տարբերություններում: Հետևաբար, ասիական բժշկության տեսանկյունից հուզական գրգռման մակարդակի մշակութային տարբերությունների վերաբերյալ լրացուցիչ հետազոտությունը կարող է դառնալ ասիական բժշկության և հոգեբանության վերաբերյալ խորքային հետազոտության հիմք:

Օգտագործված գրականության ցանկ

1. Integrative Medicine Research: “Cultural differences in emotion: differences in emotional arousal level between the East and the West” by Nangyeon Lim

2. Էրին Մեյեր «Աշխարհի Մշակույթների Քարտեզ / The Culture Map». Երևան 2023, Newmag հրատարակչություն

3. Ekman P. Universals and cultural differences in facial expressions of emotion. In: Cole JK, editor. Nebraska symposium on motivation. Lincoln, NE: University of Nebraska Press; 1972.

4. Matsumoto D, Kudoh T, Scherer K, Wallbott H. Antecedents of and reactions to emotions in the United States and Japan. J Cross Cult Psychol 1988

5. Հայկական սովետական հանրագիտարան, խմբագիր՝ Վիկտոր Համբարձումյան, Երևան, Հայ սովետական հանրագիտարան հրատարակչություն, 1981, էջ 656:

6. Смелзер Н. Социология: пер. с англ. — М.: Феникс, 1994

7. Markus HR, Kitayama S. Culture and the self: implications for cognition, emotion, and motivation. Psychol Rev 1991

8. Myers DG. Theories of emotion. In: Psychology. 7th ed. New York, NY: Worth Publishers; 2004.

9. Russell JA. A circumplex model of affect. J Pers Soc Psychol 1980

10. Feldman LA. Distinguishing depression and anxiety in self-report: evidence from confirmatory factor analysis on nonclinical and clinical samples. J Consult Clin Psychol 1993

11. Tsai JL. Ideal affect: cultural causes and behavioral consequences. Perspect Psychol Sci 2007

12. Suh EM, Koo J. A concise measure of subjective well-being: scale development and validation. Korean J Soc Pers Psychol 2011 [In Korean, English abstract].

13. Lu L, Gilmour R. Culture and conceptions of happiness: individual oriented and social oriented SWB. J Happiness Stud 2004

14. Uchida Y, Kitayama S. Happiness and unhappiness in East and West: themes and variations. Emotion 2009

15. Kacen JJ, Lee JA. The influence of culture on consumer impulsive buying behavior. J Consumer Psychol 2002

16. Schwartz SH. Universals in the content and structure of values: theoretical advances and empirical tests in 20 countries. Adv Exp Soc Psychol 1992